ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆԻ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲՐՅՈՒՍԵԼ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Գևորգ Մանթաշյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Բելգիայի Թագավորություն (քաղաք Բրյուսել) , 2023թ. հոկտեմբերի 17-ից 19-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Եվրոպական Միություն:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն «Եվրոպական Միությունը թվայնացման համար. Արևելյան գործընկերության շրջանակներում թվային տնտեսությանն ու հասարակությանն աջակցման 2-րդ փուլ» ծրագրի ուղղորդող կոմիտեի նիստին նախորդող աշխատաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

2023թ. հոկտեմբերի 18-ին Բելգիայի Թագավորությունում (ք. Բրյուսելում) կայացել է «Եվրոպական Միությունը թվայնացման համար. Արևելյան գործընկերության շրջանակներում թվային տնտեսությանն ու հասարակությանն աջակցման 2-րդ փուլ» ծրագրի (Այսուհետ՝ Ծրագիր) ուղղորդող կոմիտեի նիստին նախորդող աշխատաժողովը: Աշխատաժողովին մասնակցել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը, ով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության թվայնացման շուկաների ներդաշնակեցման (HDM) պանելի և «Եվրոպական Միությունը թվայնացման համար» (այսուհետ՝ «EU4Digital») նախաձեռնության համակարգող:

Աշխատաժողովը հանդիսանում էր նախապատրաստական փուլ 2023թ. նոյեմբերի 14-ից 15-ը առցանց կայանալիք ամենամյա ԱլԳ երկրների թվային համաժողովի և «EU4Digital» նախաձեռնության ուղղորդող կոմիտեի նիստի համար:

Աշխատաժողովի նպատակը երկկողմ (ԵՄ-ԱլԳ երկրներ) և ազգային մակարդակներում «EU4Digital» ծրագրի կողմից ստեղծված արժեքների բարձրացումն էր՝ հենց երկրների կողմից արդյունքների ընդլայնման միջոցով: Աշխատաժողովի ընթացքում ԱլԳ պետությունների ներկայացուցիչների, ԵՄ պատվիրակությունների, Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնված բանակցությունների, Եվրոպական Խորհրդի, ինչպես նաև ծրագրի փորձագետների միջև կայացան բաց քննարկումներ: Դրանք կենտրոնացած էին երկկողմ և ազգային օրակարգերում «EU4Digital» նախաձեռնության գործողությունների և արդյունքների ընդունման գործընթացների դյուրացման ուղիների բացահայտմանն ու տարածաշրջանային բացթողումների լրացմանը: Մասնավորապես՝ քննարկումները կենտրոնանացած էին այն գործընթացների և գործողությունների վրա, որոնցով կարող են ուղղորդվել ԱլԳ երկրները՝ հաստատելու, որ «EU4Digital» նախաձեռնության արդյունքները և երկրների պահանջները համապատասխանում են միմյանց և աջակցվում են ԵՄ պատվիրակությունների տարեկան պլանավորման շրջանակներում՝ երկկողմ համագործակցության միջոցով:

Քննարկումների հիմնական նպատակը գործողությունների քայլերի վերաբերյալ համաձայնության ձեռքբերումն էր, ինչը թույլ է տալիս յուրաքանչյուր երկրի սահմանել իր կարիքները, ինչպես նաև «EU4Digital» նախաձեռնությանը վերաբերող ամենաարդիական թեմաները, որոնք հակազդում են իրենց երկրի օրակարգի հետ:

Աշխատաժողովի ընթացքում ազգային առաջնայնությունների և զարգացումների համատեքստում մանրամասնորեն վերանայվել են «EU4Digital» նախաձեռնության վեց թեմատիկ հոսքերը: Աշխատաժողովը կենտրոնացած է եղել ամենակարևոր թեմաների, հիմնական ձեռքբերումների, հաջորդող քայլերի, ինչպես նաև ԱլԳ երկրների գործողությունների վրա, որոնք պետք է եզրափակվեն:

Մասնավորապես Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության (DG NEAR) կողմից ներկայացվել են թվայնացման ոլորտում ԱլԳ ռազմավարական նպատակները և ներդրումները, մասնավորապես՝ ԱլԳ թվային օրակարգի հետ կապված ներկայիս

ռազմավարական նպատակներն ու առաջնայնությունները, որոնք կապված են «EU4Digital» գործողությունների և արդյունքների հետ:

Ընդհանուր ակնարկ է կատարվել «EU4Digital»-ի գործողություններին՝ հաշվի առնելով երկրների առաջնայնություններն ու զարգացումները: Բացահայտվել են այն ուղիները, որոնցով կարելի է արագացնել «EU4Digital»-ի գործողությունների և արդյունքների կիրառելիությունը ազգային և երկկողմ հարաբերությունների օրակարգերում և վերացնել այն բացը, որը գոյություն ունի տարածաշրջանային հարթության և երկկողմ/ազգային մակարդակներում:

Աշխատաժողովի բոլոր մասնակիցների կողմից քննարկվել են հեռահաղորդակցության ոլորտին վերաբերող թեմաները, ինչպիսիք են՝ ռոումինգ, 5G մասնավոր ցանցերի զարգացում, 5G անվտանգության համար գործող «EU4Digital» գործիքակազմ, լայնաշերտ և գերարագ կապ, հանրային ծառայությունները կարգավորող կառույցներին տրամադրվող աջակցություն:

Քննարկումներ են տարվել նաև էլեկտրոնային վստահության և միջսահմանային թվային ծառայությունների ոլորտում, որն իր մեջ ներառում է էլեկտրոնային նույնականացում և վստահության ծառայություններ, փոխգործունակ միջսահմանային էլեկտրոնային նույնականացում, տվյալների կառավարման ռազմավարություններ, էլեկտրոնային ծառայությունների փոխգործունակության շրջանակներ:

Քննարկվել է նաև էլեկտրոնային առևտրի ոլորտը՝ պիլոտային միջսահմանային էլեկտրոնային առևտուր, էլեկտրոնային լոգիստիկա, էլեկտրոնային մաքսազերծում, էլեկտրոնային առևտրի խթանում: Նշվել է, որ ծրագրի շրջանակում նախատեսվում է պիլոտային ծրագիր իրականացնել «Ամազոն» օնլայն առևտրի հարթակում, որտեղ փորձ կարվի ձևավորել ազգային ապրանքների բաժիններ, որտեղ Հայաստանը նույնպես կարող է մասնակցել իր մասը պատրաստելու համար:

Միաժամանակ քննարկվել է էլեկտրոնային առողջապահությունը, մասնավորապես՝ էլեկտրոնային առողջապահության ռազմավարությունները, պիլոտային միջսահմանային էլեկտրոնային առողջապահությունը և այդ ոլորտում համագործակցության աջակցությունը: Այստեղ չափազանց ուշադրություն է դարձվել ապագա պիլոտային ծրագրի տեսակի վրա, որը մեր առաջարկությամբ կարող է լինել դեղատոմսերի փոխճանաչումը:

Քննարկումներ են ընթացել թվային կարողությունների ոլորտում՝ «Ed Tech» հաբի հարթակի, մենթորային ծրագրերի, Թվային տնտեսության և հասարակության ինդեքսի աքսելերացիայի, ՓՄՁ-ների համար թվային մրցունակության շրջանակների վերաբերյալ:

Կայացել են քննարկումներ նաև ՏՀՏ նորարարություն և ստարտափ էկոհամակարգերի ոլորտում: Քննարկվել են բարձր արդյունավետությամբ ինկուբացիաները, նորարարական կլաստերները և զարգացնող տեխնոլոգիաների օգտագործումը:

ԱլԳ երկրների մասնակիցների և ԵՄ պատվիրակությունների կողմից քննարկվել են նաև վերոնշյալ ոլորտներում «EU4Digital» նախաձեռնության շրջանակներում իրականացվող գործողությունները:

Աշխատաժողովի արդյունքները ներկայացվելու են «EU4Digital» տարեկան ուղղորդող կոմիտեի հանդիպման ժամանակ:

Գևորգ Մանթաշյանը հետաքրքրվել է, արդյոք հնարավոր է փոփոխություններ իրականացնել Արևելյան գործընկերության շրջանակներում, ինչին եվրոպական կողմը պատասխանել է, որ փոփոխություններ իրականացնելու կարիք չկա, դրանք կարող են իրականացվել ԵՄ գործիքակազմի այլ ծրագրերով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը հանդիպել է Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության (DG NEAR) Եվրոպական հանձնաժողովի բաժնի պետ Դեյվիդ Քալլենի հետ: Ժամանակի սղության պատճառով հանդիպման ընթացքում հիմնականում քննարկվել է Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց, ինչպես նաև Սյունիքի մարզի բնակիչների համար նախատեսված գրանտային ծրագրերի ֆինանսավորման հարցը: Քննարկվել է նաև Եվրոպական Ներդրումային Բանկի և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջև Սև ծովով անցնող օպտիկամանրաթելային մալուխի թեմայի շուրջ համագործակցության հնարավորությունները: Մասնավորապես ԵՆԲ-ի կողմից դիտարկվել է, որ ծրագրին նախատեսվում է ՀՀ մասնավոր ընկերության մասնակցություն, նաև մտքեր են փոխանակվել այդ ընթացակարգի և մասնակցությունն այլ ձևաչափերի վերաբերյալ: ԵՆԲ ներկայացուցիչները նշել են, որ հաշվի կառնեն ՀՀ կառավարության կարծիքը:

Այցի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը այցելել է նաև բելգիական «Sky-Hero» ընկերության արտադրամաս, որը հանդիսանում է ինժեներական ընկերություն՝ մասնագիտասված ռոբոտաշինության և ԱԹՍ-ների արտադրության վրա: Ընկերության արտադրամասում ցուցադրվել են ընկերության կողմից ստեղծված ԱԹՍ-ները: Գևորգ Մանթաշյանի կողմից վերջիններիս առաջարկվել է ՀՀ «Ինժեներական քաղաքում» ռեզիդենտության կարգավիճակ՝ համատեղ համագործակցության և փորձի փոխանակում իրականացնելու նպատակով:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը հանդիպել է նաև Բելգիայի Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Տիգրան Բալայանին, որի հետ իրականացվել է մտքերի փոխանակում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

«Եվրոպական Միությունը թվայնացման համար. Արևելյան գործընկերության շրջանակներում թվային տնտեսությանն ու հասարակությանն աջակցման 2-րդ փուլ» ծրագրի ուղղորդող կոմիտեի նիստին նախորդող աշխատաժողովի ժամանակ առաջարկվել է «EU4Digital» նախաձեռնության զարգացումների վերաբերյալ թարմացումները ներկայացնել թվային կերպով, որտեղ ավտոմատացված կլինեն նախաձեռնության զարգացումները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ԳԵՎՈՐԳ ՄԱՆԹԱՇՅԱՆ

24.10.2023թ.